# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 84-Լ

«10» 10 2025թ. ք. Երևան

## ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ «ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՐԴԻ ՀԱՐՑԵՐ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով դատախազների թեկնածությունների 2025 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման «Քրեական վարույթի արդի հարցեր» դասընթացի գրավոր քննության վերահանձնման արդյունքները գնահատելու, իսկ արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար, համապատասխանաբար, գնահատման և բողոքարկման հանձնաժողովներում դատախազ անդամներ նշանակելու անհրաժեշտությունից, հիմք ընդունելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Դատախազների թեկնածությունների 2025 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման «Քրեական վարույթի արդի հարցեր» դասընթացի գրավոր քննության վերահանձնման արդյունքները գնահատելու համար ձևավորել գնահատման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

**Արմեն Գրիգորյան** - ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ,

**Արմեն Մուրադյան** – Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ,

**Արմեն Օսեյան** – Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ,

**Նիկոլայ Բարսեղյան** – Արագածոտնի մարզի դատախազ,

**Կարեն Սուքիասյան** – Կոտայքի մարզի դատախազ:

2. Դատախազների թեկնածությունների 2025 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման «Քրեական վարույթի արդի հարցեր» դասընթացի գրավոր քննության վերահանձնման արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորել բողոքարկման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

**Արամ Արամյան** - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

**Դավիթ Աղաջանյան** - Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Արդարադատության ակադեմիայի ռեկտորին:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ** **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**